# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. 060-80-00-70,*
*Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)*

***թիվ 827-18***
***19 դեկտեմբերի, 2018թ.***

***Հայաստանի Հանրապետության***
***Տարածքային կառավարման և զարգացման***
***նախարարություն***

***Հայաստանի Հանրապետության***
***Լոռու մարզպետարան***

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 04.05.2018 թվականի թիվ 101/107.3.1/2663-18 գրության, կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 26-ին կայանալիք տասնիններորդ հերթական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին տեղեկատվություն և նիստի օրակարգում ընդգրկված հարցերի նախագիծը:

Առդիր՝ 2 էջ:

***Հարգանքով՝***
***Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիտանյան***

Կատարող՝ Ն. Վարդանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ

**18 դեկտեմբերի 2018 թվականի, N 217-Ա**

### 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ, 15-րդ և 16-րդ հոդվածներով, 35-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) 2017 թվականի նոյեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին>> N 2-Ն որոշման՝

***որոշում եմ.***

1. 2018 թվականի դեկտեմբերի 26-ին ժամը 11:00-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի վարչական շենքում՝ համայնքի ղեկավարի աշխատասենյակում, գումարել ավագանու հերթական դռնբաց նիստ:
2. 2018 թվականի դեկտեմբերի 26-ին կայանալիք ավագանու հերթական նիստի օրակարգում ընդգրկել հետևյալ հարցերի որոշման նախագծերը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2018թ., դեկտեմբերի 18,**
**ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի
2018 թվականի դեկտեմբերի 18-ի N 217-Ա որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

(*զեկուցող՝ Ա. Տիտանյան, Ն. Տիտանյան*)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

(*զեկուցող՝ Ա. Տիտանյան, Ն. Տիտանյան*)

3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(*զեկուցող՝ Ա. Տիտանյան, Ն. Տիտանյան*)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**